

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆՈՐ ԿԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Օգոստոսի 1—2-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում չորս նիստից բաղկացած իր առաջին նստաշրջանը գումարեց Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմը, որ նշանակվել էր Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ս. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից՝ Վեհափառ Հայրապետի ընտրությունից հետո, ըստ անցյալ տարիների ավանդության և Ազգային-Եկեղեցական ժողովի որոշման: Նրկատի ունենալով, որ Գերագույն Հոգևոր Խորհրդի նոր կազմը, որպես Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորհրդատու մարմին, պիտի պաշտոնավարի մինչև առաջիկա Ազգային-Եկեղեցական ժողովը, որը նախատեսված է գումարել երկու տարի հետո, ինչպես նաև հաշվի առնելով, որ նախորդ շրջանից բազմաթիվ հարցեր դեռևս մնում են անլուծ, Վեհափառ Հայրապետը վերանշանակեց Խորհրդի նախկին կազմը՝ ատենապետությամբ Ամենապատիվ Տ. Թորգոմ Պատրիարք Մանուկյանի և Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարք Գազանճյանի և բաղկացյալ հետևյալ անդամներից. Վաչե արքեպս. Հովսեփյան, Արսեն արքեպս. Բերբերյան, Ներսես արքեպս. Պոզապալյան, Գրիգորիս արքեպս. Բունիաթյան, Խաժակ արքեպս. Պարսամյան, Գարեգին արքեպս. Ներսիսյան, Պարգև եպս. Մարտիրոսյան, Տիար Գրիգոր Խանջյան, Տիար Պիոն Հակոբյան, Տիար Հակոբ Փափազյան, Տիար Ռաֆայել Պապյան՝ սույն կազմին ավելացնելով հետևյալ անդամներին՝ Գևորգ արքեպս. Սերայդարյան, Տիրան արքեպս. Կյուրեղյան, Ասողիկ եպս. Արիստակեսյան, Աբրահամ վրդ. Մկրտչյան և պրոֆ. Վլադիմիր Բարխուդարյան:

Նորին Սրբությունը Խորհրդի լիազոր-անդամ նշանակեց արտասահմանյան չորս երկրամասերից հետևյալ թեմական առաջնորդներին՝ Զավեն արքեպս. Չինչինյան (Միջին Արևելք), Գյուտ արքեպս. Նագգաշյան (Եվրոպա), Գիսակ եպս. Մուրադյան (Հարավային Ամերիկա), Աղան արքեպս. Պալեոզյան (Ծայրագույն Արևելք):

Սույն ընդլայնված կազմը այսուհետև ժողով կգումարի տարին երկու անգամ: Առաջին նիստը նախատեսված է առաջիկա սեպտեմբերի վերջին;

Ներկա նստաշրջանը Վեհարանի դահլիճում բացեց Գարեգին Ա. Կաթողիկոսը՝ աղոթքից հետո տալով ընդարձակ զեկույց՝ իր ընտրությունից հետո կատարված աշխատանքների և ի հայտ եկած հարցերի մասին: Քննարկվեցին հոգևոր ճեմարանի զարգացման, ներքին թեմերի վարչական կազմակերպման, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ թեմերի հարաբերության, Քրիստոնեության ընդունման 1700-ամյակի տոնակատարության Կենտրոնական Հանձնախմբի նշանակման, Մայր Աթոռի ներքին վարչական, տնտեսական և հաշվական կացության, Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի հետ հարաբերության (զեկուցում Վեհափառ Հայրապետի կողմից), Քրիստոնեական դաստիարակության, ինչպես և որոշ թեմերից ներկայացված այլ հարցեր:

Սույն նստաշրջանը առիթ հանդիսացավ Գերագույն Հոգևոր Խորհրդի բոլոր անդամներին նախ մոտիկից տեղեկանալու Մայր Աթոռի գործունեության, հաղորդ դառնալու Վեհափառ Հայրապետի գաղափարներին և առաջիկա ծրագրերին, արտահայտելու իրենց տեսակետները՝ Մայր Աթոռի գործունեության զարգացման և Հայաստանյայց Եկեղեցու առավել ծաղկման վերաբերյալ: